



Մեծ Պահքի վերջին Կիրակին կը կոչուի Ծաղկազարդ: Յիսուս Քրիստոսի հանդիսաւոր մուտքն է Երուսաղէմ: Երբ Յիսուս ասանակի վրայ նստած մուտք կը գործէ Երուսաղէմ, ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ անոր՝ ձիթենիի եւ արմաւենիի ճիւղերով դիմաւորելով զինք: Անոնք նոյնիսկ իրենց հագուստները կը փռեն գետին, որպէսզի Յիսուս անոնց վրայէն անցնի:

Երբ Յիսուս տաճար կը մտնէ կը տեսնէ, որ շուկայի վերածուած է ան, անմիջապէս կը մաքրէ տաճարը եւ բոլորին կը հասկցնէ, որ տաճարը միայն աղօթքի համար կը գործածուի:

Ծաղկազարդի ճաբաթ երեկոյեան ժամերգութեան ընթացքին կը բացուի քառասուն օրեր փակ մնացած խորանը: Ծաղկազարդի օրը Անդատանի ժամանակ կ'օրհնուին ձիթենիի ճիւղերը եւ հաւատացեալները օրհնուած ձիթենիի ոստերը տուն կը տանին:

Հին ատեն Ծաղկազարդի տօնակատարութեան օրը զանազան սովորութիւն-

ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ԾԱՂԿԱԶԱՐԴԷ

ներ կային: Բայց այսօր բոլոր եկեղեցիներուն մէջ կը կատարուի միայն հանդիսաւոր թափօր: Մանուկներ նոր զգեստ հագած, իրենց ձեռքերուն մոմ բռնած՝ ծնողներուն ընկերակցութեամբ եկեղեցի կու գան ու կը մասնակցին թափօրին:

Անցեալին Ծաղկազարդին նախորդող գիշերը, նորապսակ երիտասարդները արմատախիլ կ'ընէին նոր բողբոջած ուռենիները եւ կը տանէին եկեղեցի: Ամբողջ եկեղեցին կը զարդարուէր ուռենիի բողբոջած ճիւղերով:

Քեսապի մէջ Ծաղկազարդի նախօրեակին եօթ տեսակ բուրումնաւետ խոտեր եւ ծաղիկներ կը դնէին շուրով լեցուն ամանի մը մէջ, այդ շուրը կը կոչուէր «Եութնուս»: Ծաղկազարդի առտուն ընտանիքի անդամները այդ շուրով կը լուացուէին:

Նախքան տուն մեկնիլը՝ հաւատացեալները օրհնուած ուռենիի ճիւղեր կը վերցնէին իրենց հետ, ինչպէս նաեւ՝ վառած մոմեր: Մոմերը կը տանէին գերեզման եւ կը հաստատէին իրենց հանգուցեալի գերեզմանաքարին:

Ինչ կը վերաբերի ճիւղերուն, անոնց կը վերագրուէր չար խափանի կարողութիւն եւ առատացնողի զօրութիւն: Տարուան ընթացքին անոնք կ'օգտագործէին բազմաթիւ առիթներով, մինչեւ յաջորդ Ծաղկազարդ: Այդ ճիւղերէն կը նետէին մթերքներուն կարասներուն մէջ, զանոնք կ'օգտագործէին կարագ հարելու ժամանակ, վերջապէս, զանոնք հիւսելով՝ օղակ կը պատրաստէին, մէջէն կ'անցընէին հաւերը, որպէսզի անոնք գիրնան:

Ջաւախքի մէջ ուռենիի ճիւղերով ասոր-անոր կը զարնէին ըսելով՝ «Քամու տեղ սրտի դեղ», յուսալով, որ

հիւանդութիւնները կը բուժուին եւ կամ հեռու կը մնան:

Վասպուրականի մէջ կը հաւատային, որ եթէ Ծաղկազարդին ուռենիներ տնկեն, հետագային անոնց ճիւղերով հրաշքներ կրնան գործել:

Աշտարակի մէջ Ծաղկազարդի շատ ծախօթ երգ էր՝

«Անակ, անակ, ճօճանակ:
Աստուծոյ դուռը բանակը,
Մտնենք ժամ անենք,
Դուրս գանք պատարագ անենք,
Չալ եզը մորթենք,
մատաղ անենք»:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒԹԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻՔԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐԴԵՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՇԵԱՆ

ԱՒՊ ՇԱԲԱԹ

Ծաղկագարդեն ետք Աւագ Շաբաթը կը սկսի: Աւագ Շաբթուան իւրաքանչիւր օրը իր խորհուրդը ունի: Աւագ Երկուշաբթիի օրհնութիւնը գովքը կը հիւսէ Աստուածային ստեղծագործութեան, ուր Աստուած իր աներեւոյթ պատկերը մարդուն հաղորդեց եւ դրախտային կեանքը պարգեւեց անոր:

Աւագ Երեքշաբթիի օրհնութիւնը, կը ներկայացնէ «Տասը Կուսանաց» առակը, որ Զրիստոսի երկրորդ գալստեան պատրաստ ըլլալու խորհուրդն է: Երեկոյեան «Տասը Կուսանաց» արարողութիւնը, միշտ պատրաստ ըլլալու պատգամն է, որովհետեւ չենք գիտեր, թէ Զրիստոս ե՞րբ պիտի գայ դատելու համար մարդիկը: Գորեքշաբթիի օրհնութիւնը կը յիշէ, թէ ինչպէս, աստուածային պատկերին վրայ ստեղծուած մարդը կը պատրաստուի մատնել իրեն համար աշխարհ եկած Աստուածորդին:

Աւագ Հինգշաբթի առաւօտեան՝ ապաշխարութեան կարգը կը կատարուի, կեսօրին Վերջին Ընթրիքի յիշատակը, ապա երեկոյեան՝ Ոսկուայի կարգը, իսկ գիշերը՝ Խաւարման արարողութիւնը, որ կը յիշատակէ Յիսուսի մատնութիւնն ու չարչարանքները:

Աւագ Ուրբաթ առաւօտեան՝ Խաչելութեան կարգը կը կատարուի, իսկ երեկոյեան՝ Թաղման կարգի նախատեսակը:

Աւագ Շաբաթ առաւօտեան՝ Թաղման կարգի յիշատակումն է, իսկ երեկոյեան մարգարեական գիրքերու ընթերցումը, ապա ճրագալոյցի Սուրբ Պատարագը: Աւագ Շաբթուան ծիսական արարողութիւնները հարուստ են մարգարեական ընթերցումներով, աւետարանական հատուածներով, առաքելական թուղթերով, ինչպէս նաեւ սաղմոսներով, քարոզներով, շարականներով, նաեւ Ս. Ներսէս Ընդհալի Հայրապետի երգերով, որ մեծապէս կը ճոխացնեն մեր Եկեղեցու ծիսական այս կարեւոր ժամանակաշրջանը:



ԽԱՍՈՒԵՐ

**Եկեք միասին ներկենք
նախշուն գոյներով:**

ԺԱՀՐԻԿԸ

Յաջորդ օրը օրիորդ Անին տեսակապով խօսեցաւ, երկար բացատրեց ու առաջարկեց քորոնավիրուսի անունը հայերէն լեզուով կոչել «Պսակաճեւ Ժահր», կանխազգուշացման միջոցներ թելադրեց: Լիլիթ ամբողջ օրը հեռատեսիլ դիտող մեծ մայրիկէն լսած էր...

«Յաճախ լուալ ձեռքերը օճառով ու տաք ջուրով, հեռու մնալ փոշտացող մարդոցմէ, փողոցի դռներն ներս մտնելուն պէս հանել կոշիկները, ջերմաստիճանը ստուգել, անհրաժեշտութեան պարագային դիմել բժշկական օգնութեան...»

- Օ՛Ֆ.. մեծմայրիկ չանճարացա՞ր այս կըրկնութիւններէն, ինչքա՞ն կը փափաքէի տեսնել այդ վիրուսը.- ըսաւ կատակելով:

Մեծ մայրիկը սարսափած նայեցաւ թռչնիկին:

- Ի՞նչ կ'ըսես աղջիկս, հեռու, հեռու մեզմէ... քը՛շ, քը՛շ.- խօսեցաւ ան գոգնոցը թափահարելով իբր չարերը հեռացնելու միտումով:

Լիլիթ իրիկունը մտաւ իր սենեակը, երկա՛ր խօսեցաւ ընկերուիներուն հետ, բոլորը ձանձրացած էին, անհամբեր կը սպասէին մանկապարտեզի վերաբացման ու Ժահրի տարածման մասին կը պատմէին:

- Ինչքա՞ն կը փափաքէի տեսնել այդ վիրուսը.- Լիլիթը անգամ մը եւս յայտնեց իր ցանկութիւնը:

Պատուհանին կողմէն ձայն լսեց, կլոր, պսակաճեւ մարմին մը տեսաւ գարդարուած կարմրուկ կէտերով, պատուհանին ապակիին փակած կը նայէր իրեն:

Լիլիթ աչուկները խոշոր-խոշոր բացաւ ու հարցուց:

- Ո՞վ ես:

- Ես Ժահրիկն եմ, պսակաւոր Ժահրին ձագուկը:

- Ա՛հ, ինչ սիրուն ես,- ըսաւ Լիլիթ ապակիին ետեւէն աւելի ուշադիր զննելով Ժահրիկը:

- Եկայ ծանօթանալու հետո՞ղ, մի վախար ես փոքրիկներուն չեմ վնասեր:

- Փիտեմ, գիտեմ, բայց քեզ ներս չեմ իրաւիրէր, մամաս, պապաս, մանաւանդ մեծ մամաս կրնան հիւանդանալ:



- Այո՛, իրաւունք ունիս, անոնց առողջ մնալուն պարագան չեմ երաշխաւորէր, բայց ես փոքրիկներուն չեմ վնասեր:

- Չը՛մ... չեմ հասկնար ինչո՞ւ ամբողջ աշխարհը կը սարսափի քու պճիկներկայութենէդ:

- Լիլիթ... կարելոր չէ հսկայ ըլլալը, կարելորը փոքր բանէ բխած մեծ ազդեցութիւնն է:

- Բայց դուն վտանգաւոր ես, սիրուն տեսք ունիս բայց չար ես: Ինչո՞ւ մտար մեր երկիրը:

- Թող մարդիկ աւելի ուշադիր ըլլային, իրար հանդէպ սիրալիր, հոգատար ու հանդուրժող:

- Բայց ես կը հաւատամ որ բարի ու զիտուն մարդիկ պիտի յաղթահարեն ու վերջ տան քու գործած աւերիդ:

- Այո, ես ալ գիտեմ Լիլի, առողջ ու երջանիկ ապրիր եւ երբեք մի փափաքիր չարը տեսնել:

- Իմ անունս Լիլիթ է.- գոռաց Լիլիթ թափով ու ցատկեց:

- Լիլիթ, անուշիկս ի՞նչ ունիս: Մեծ մայրիկը գորովանքով կը շոյէր Լիլիթին խարտեաշ մագերը:

- Շուտով մանկապարտեզ պիտի երթամ.- ըսաւ Լիլիթ աչքերը շփելով.- Ժահրիկը չկայ..

- Ժահրի՛կ.- արծազանգեց մաման:

- Պսակաճեւ Ժահրը.. քորոնավիրուսը.- մրթմրթաց քրին տակէն:

- Չա՛ք քորոնավիրուսը.. կըրկնեցին միաբերան ու նշանակալից նայեցան իրարու:

Պատուհանը փակ էր, արեւի փայլուն շողերը ինկած էին անկողնին վրայ, մաման, պապան ու մեծ մայրիկը անուշ ու ներողամիտ կը ծայտէին:

Պերճուհի Աւետեան

ԶԱՏԿՈՒՄՆ ՀԱՒԿԻԹՎ



Դարերու ընթացքին, սերունդէ սերունդ սովորութիւններ կը փոխանցուին, որոնք մաս կը կազմեն մեր մշակոյթին: Չատկուան առիթով հաւկիթ ներկելն ու հաւկթախաղ կազմակերպելը այդ սովորութիւններէն են:

Ըստ Տաթևացիին հաւկիթը երկրին նմանութիւնն է: Կեղեւը կը ներկայացնէ երկինքը, սպիտակուցը՝ ջուրը, դեղնուցը՝ երկիրը:

Ըստ սովորութեան, հաւկիթը կարմիր կը ներկուի եւ անցեալին այդ կ'ըլլար որդան կարմիրով: Հաւկիթին կարմիր ներկուիլը կը խորհրդանշէ քրիստոսի արեամբ ամբողջ աշխարհի փրկութիւնը:

Ինչպէ՞ս կրնանք բնական գոյներով ներկել հաւկիթները

Աւելի առողջապահական հաւկիթներ հրամցնելու համար կրնանք բնական գոյներով ներկել զանոնք՝

- Բաց կարմիր՝ կարմիր սոխի կեղեւով
- Վարդագոյն՝ թարմ ճակնդեղի հիւթով
- Բաց մանիշակագոյն՝ մանիշակագոյն ծաղիկներով
- Բաց կանաչ՝ շոմիկի (սպանախ) տերեւով
- Կապոյտ՝ կարմիր կաղամբի տերեւով
- Դեղին՝ խնձորի կեղեւ կամ քրքումով
- Բաց սրճագոյն՝ սուրճով



ԴՌՆԲԱՅԵՔ

Ծաղկազարդի երեկոյեան տեղի ունեցող արարողութիւնը կը կոչուի Դռնբացեք, որ պատկերաւոր ձեւով կը յիշեցնէ մեզի վերջին դատաստանը: Այս արարողութեան իմաստը խտացած կը գտնենք օրուան յատուկ «Բաց Մեզ Տէր» շարականին մէջ:

Դռնբացեքի արարողութիւնը յատուկ է միայն հայ եկեղեցւոյ:

Ս. Սեղանին վարագոյրը կը փակուի, որուն առջեւ եկեղեցականը ծնկաչոք, կ'երգէ օրուան խորհուրդին յատուկ երգը եւ մեծ բանալիով մը փայտին կը զարնէ, այդպիսով՝ նշանակելով արքայութեան դռները թակելը եւ հաւատացեալներուն անուով կը պաղատի Աստուծոյ, որ չըլլայ թէ իրենց ունեցած թերութիւններուն ու մեղքերուն պատճառով իրենց առջեւ փակ պահէ արքայութեան դռները, այլ իր Աստուածային անսահման սիրով ներէ բոլորիս մեղքերը եւ մեզ ընդունի իր յաւիտենական արքայութեան մէջ: Իսկ վարագոյրին ետին կանգնած ուրիշ եկեղեցական մը փոխասացութեան ձեւով կը պատասխանէ եւ կը յիշեցնէ ներկաներուն, որ կը բացուի միայն անոնց դիմաց, որոնք ապաշխարութեամբ ու հաւատքով կը դիմեն Աստուծոյ: Ապա խորանին վարագոյրը կը բացուի եւ եկեղեցւոյ բոլոր լոյսերը կը վառին, բոլորին տեսանելի ձեւով պատկերացնելով Աստուծոյ արքայութեան լուսաւորութիւնն ու փառքը:

